

ՄՏԱՆՈԳՈՒԹՅԱՆ ՆԱՍՅԵՆՆԵՐ

Մեր անցյալի պարմամշակութային հուշարձանների գոյությունը պայման է առաջադրում մեզ, որպեսզի ազգային ժառանգությունը գնահատողի, դրա նկատմամբ առանձնակի վերաբերմունք ցուցաբերողի պահվածք ունենանք: Եվ դա լինի ոչ միայն հուշարձանները դիտողի, երբեմն էլ սուսկ ցավալիորեն արձագանքողի պահվածք, այլ իր մեջ թելադրանք ունենա՝ հոգաբարության ի՞նչ դրսևորումներով, ի՞նչ մոտեցումներով կանխենք դրանց հեփազա ավերումը, ինչպե՞ս անենք, որ սերունդների հայացքը հուշարձանների վրա մնա: Ասել է՝ սուսկ դիտող լինելուց դառնանք մրահոգության հասցեները համաշխարհային հանրությանը հասանելի դարձնողներ: Դրա մի ճանապարհը կարծես թե կարող ենք գտնել Սևծովյան րնտեսական համագործակցության (որի անդամն է Նայասպանը) երկրների ուշադրությունը սևեռելով, ասենք, Անիի եկեղեցիների, մանավանդ հիմնովին ավերվելու վրանգի առաջ կանգնած Մայր եկեղեցու վրա:

Կկարողանա՞նք, արդյոք, մեր Ազգային ժողովի հարգարժան պարգամավորների ուշադրությունը մի պահ հեռացնել քաղաքական հարցերից և Սևծովյան համագործակցության խորհրդարանական հարցերի հանձնաժողովի միջոցով բարձրացնել անդամ երկրների փարածքներում գտնվող հայկական հուշարձանների պահպանության և վերականգնման խնդիրը: Երբ 1997-ին Նայասպանում սրեղծվեց Նուշարձանների և պարմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի (ԻԿՈՄՈՍ) Նայասպանյան Ազգային կոմիտեն, կարծես թե ինչ-որ աշխուժություն պիտի նկատվեր: Մակայն այդ հասարակական կազմակերպության (դրանում ընդգրկված էին նվիրյալ մարդիկ՝ ճարարարավերներ, հնագեներ, պերական կառույցների և մրավորականության ներկայացուցիչներ) ջանքերն իրական դառնալն առաջին հերթին պայմանավորված էր ՆՏ ԱԺ-ի՝ վերոնշյալ հանձնաժողովի ակտիվ գործունեությամբ: Մի շարք երկրներում առանձնակի վերաբերմունքի կարող հայկական հուշարձաններ շար կան, սակայն դրանց մասին խոսելն այլ թեմա է: Միայն նշենք, որ Թուրքիայում դրանք հինգ հազարից ավելի են: Անիի հանդեպ վերաբերմունքը պիտի հասարարուն մնա՝ միջազգային կապերի օգրագործմամբ ամեն կերպ հասնել Անիի հուշարձանների վերանորոգմանը, գոնե առայժմ, առաջին հերթին Մայր եկեղեցին փրկել վերջնական կործանումից: Թուրքական կառավարությունը, որ Անիի մուրքին իջևանարուն է կառուցել, որ ամեն կերպ փորձում է Անին միջազգային գրոսաշրջության վայր դարձնել, կարծում ենք ինքն էլ շահագրգռված է պահպանել գոնե այն, ինչը կարող է գրավել այցելուներին: Նիմա թե ով, որ գրոսաշրջիկը ինչ գգացումներով կայցելի Անի, դա արդեն խնդրի մյուս կողմն է:

Կամուրջը

Երանելի ժամանակներում Ախուրյան գեպի խոր կիրճում կառուցված Անիի եռաշերպ կամուրջը միացնում էր երկու ափերը, և Շիրակի դաշրավայրից Կարսի սարահարթով Անի մրնելը անչափ դյուրին էր: Դա գեպի վրայով ձգված մի հրաշալի կամար է եղել՝ երեք կարգի անցորդների՝ հեփիոպի, թեթև հեծյալների և բեռնված ձիերի համար առանձին-առանձին անցումներով նախարեսված: Նիմա, երբ շարերին հասու չէ Անի այցելել, այսպես ասած, «ներսի կողմից», և վերջիններս հաճախ բավարարվում են սահմանի այս կողմի բարձունքից Անին դիտելով, Ախուրյանի կիրճի այդ կիսավեր կամուրջն իրենց համար մի րեսակ երագային մի բան է՝ ախր Անին մեկ քայլի վրա է: Կիսավեր այդ կամուրջը սահմանի բացման, նորից մարդ ընդունելու-ճանապարհելու աղերս ունի: Գուցե սուսկ գգացակա՞ն պողթկում է մեր այս ասելիքը, բայց և պերական սահմանի այս կողմի բարձունքից, և բուն քաղաքի կողմից կամրջին մոտեցողը այդ վաղեմի եռաշերպ կառույցին նայում է այն նույն գգացողությամբ, ինչ Վարդգես Մուրենյանցն էր նայում, ով կարողացավ Մայր եկեղեցին «րեսնել» որպես գործող եկեղեցի՝ շեն ու շքեղ հանդերձով ու ելումուր անող հավարավորներով:



ԱՆԻ ԴԱՐՍՊԻ ԿԵՌԱՆԱԶՐ



Անիի հարևան գյուղից ուխտավորներիս խմբին ջուր բերած քուրդ փղան, իրեն շաք բան իմացողի փեղ դրած, մեր ուշադրությունը հրավիրեց բարձրադիր պարսպի վրայի սև քարերով դրոշմված նախշին. «Ձեր պաշտած Անիի դարպասին սվաստիկա է փորագրած»։ Թարգմանիչ Նարությունը որքան էլ փորձեց մեղմել «պաշտած» բառի թարգմանությունը, այդուհանդերձ քուրդ փղայի կողմից այդ բառի արտաբերման ձևի մեջ թաքնված հեզմանքը նկատվեց։

Վիրավորվես, թե չէ, այս է պարսությանն անփետյակ այդ փղայի մրաձումը։ Նրա անելիքը ապակե մեծ փարայով մեզ ջուր բերելն էր ու վարձի սպասելը։ Բայց դե այդ փղան շաք էր ուզում իրեն ցույց փայլ, որ մեզանից լավ գիտի, թե այսփեղ ինչ քաղաքի ինչ ավերակներ են, որպեղ, ի փարբերություն մեզ, ինքն ամեն օր է լինում։

Տիմա դե արի ու այդ փղային բացառիկ հայկական կեռախաչի խորհուրդը, ներկայացրու դրա ակունքները, պարսիկ Լեոյի վկայության մասին՝ «Անիի պարիսպների այդ կլորավուն լայնանիստ աշտարակները դեղին, կարմիր, սպիտակ քարերով կառուցող

վարպետները սև քարերից փարբեր զարդեր են դրոշմել, որոնցից է նաև կեռախաչի խորհրդանիշը»:

Այդ քուրդ փղան դեռ ոչինչ, փղա էր, ծառայություն էր մատուցում, գումար վաստակում, ձեռքի հետ էլ փորձում էքսկուրսավարի դեր ստանձնել: Ավաղ, ես դա ստիպված էի բացատրել նաև «Իհլաս» լրագրական ծառայության Կարսի մեկնաբան-օպերատոր Պեղիր Ալթնոքին, ով իր փեսայից իրավ «բռնելով» այդ նշանը՝ դանդաղ հեղինակություն «իջավ» պարսպի փակ, ուր ժենյա Ավեփիսյանը՝ բեմական զգեստով, գյումրեցի երաժիշտների նվագակցությամբ, Սայաթ Նովայի երգերն էր կատարում: Նկատեցի, որ Պեղիրն առանձնակի ուշադրությամբ նկարահանեց, լուսանկարեց կեռախաչի խորհրդանիշը: Ինչու՞ ինձ հանկարծ թվաց, թե նրա հայացքում հարցական կար.

– Ի՞նչ անհանգստություն ունես, կոլեգա:

– Նայում եմ այդ դրոշմին ու չեմ հասկանում դրա խորհուրդը:

– Դու է՛լ ես կարծում, թե դա սվասթիկա է:

– Պարզապես մտածում եմ,- ուղիղ պատասխանից խույս փվեց Պեղիրը,- եթե սվասթիկա է, ի՞նչ կապ ունի երբեմնի հայկական այս քաղաքի հետ:

Պեղիրի մտահոգությունն ինձ հարազատ թվաց, և նրա ասած «երբեմնի» բառը չխոցեց ինձ: Նա, իհարկե, իր իմացությամբ ու վերաբերմունքով ջուր բերող այն քուրդ փղայից մի փաս գլուխ բարձր էր, բայց նա իր երկրի լրագրողն էր, և նրա ռեպորտաժներում արժարժված նման ամեն մի շփոթություն հանկարծ կարող էր հայկական արմատների մասին կասկածավոր գաղափարակիրներին մի նոր թեմա փայլ: Եվ հարկ էր, որ մեր խմբին կամովին ուղեկից դարձած ու մեր ամեն հանդիպումը նկարահանող Պեղիրի հետ մի քիչ երկարեր մեր գրույցը:

– Դրանք հազար փարվա պատմություն ունեն, Պեղիր, բայց այսօր քո աչքի առաջ ընդամենը մի քանի հարյուր մետրն է երկուսուկես կիլոմետր երկարություն ունեցող պարիսպներից: Միայն Անիի պարիսպների վրա չէ, որ կեռախաչի պատկերներ կան. հայ իրականության մեջ դեռևս հնագույն ժայռապատկերներում, այնուհետև նաև բրոնզե դարում, կեռախաչը պատկերվել է ոչ միայն կառույցների, այլև կավամանների, բրոնզե գոբինների, դաշույնների և այլ իրերի վրա: Այս պարիսպների վրա պատկերված կեռախաչն իր խաչաձևման մասում շրջանակ ունի, որը (կեռախաչն ընդհանրապես) խորհրդանշում է արև, կրակ, հավերժություն, պարզաբերություն, ծննդաբերություն: Թողնելով անընդհատ շարժման փավորությունը՝ կեռախաչը նաև խորհրդանշել է արևի շարժումը:

– Ասել է՝ նացիստներին ծանոթ էր կեռախաչը, որ խորհրդանիշ վերցրին սվասթիկան՝ հենց քո ասած կեռախաչի նախափայլը:

– Կարծում եմ՝ գիտեին և վերցրել են որպես հավերժության խորհրդանշանի նախափայլ: Սվասթիկա բառը սանսկրիտերեն նշանակում է լավ լինել՝ արտահայտելով նաև երջանկություն, բարեբախտություն: Անշուշտ, այլ գրույցի թեմա է, թե հայերն ինչ խորհուրդ են դրել դրա մեջ, նացիստները՝ ինչ:

Իր նոթափեպրում գրառումներ անող Պեղիրը հարցրեց.

– Կեռախաչը մերոնք չեն հանել (մինչ այդ ես նրան պատմել էի Էրզրումի հայկական եկեղեցու մասին, որի առաջամաս պատր, միջից հայաբառ փորագրություններ ունեցող քարերը հանելու նպատակով, վերաշարված է, գմբեթին՝ կիսալուսին, կողքին էլ մինարեթ), որովհետև մտածել են, թե դա հայկական նախազարդերի հետ կապ չունի՞,- հարցրեց Պեղիրը, ասես ուրախ էր, որ չի հանվել և ուրախ էր նաև, որ հիմա իմացավ, թե դա ինչ նախազարդ է և հանկարծ, մի փեսակ զգուշավորությամբ, որ դրանում խայթոց չնկատվի, հարցրեց.

– Իսկ ձեր խմբից բոլորը գիտեն այդ մասին,- հարցրեց նա:

– Անի ուխտագնացության եկող ամեն հայ, կարծում եմ, ծանոթ է կամ անպայման նախապես ծանոթանում է այս քաղաքի պատմությանը:

– Դա քո համոզմունքն է, թե՞ ուզում ես, որ այդպես լինի:

– Զեզ համար, Պեղիր, այս ավերակ քաղաքը գուցե թե պարզապես քարերի կույր է, բայց այսօր եկող ամեն հայի համար այն սրբավայր է, մասունք: Ամեն ընկած քար ու խոյակ

հագարամյա պարամոթյան խոսուն վկա է: Ուխտավորների հետ անցիր այս եկեղեցիների մոտով, նրանց հետ կանգնիր ընկած սյան, խաչանախշ քարի մոտ, ուշադիր նայիր այդ մարդկանց աչքերին, և այնպեղ կրեսնես կորուսյալ հայրենիքի կարոտը: - Ասացի ու մտերմորեն թևանցուկ արեցի. ինձ հաճելի էր, որ նա հետաքրքրություն է ցուցաբերում մեր ժողովրդի պարամոթյան հանդեպ:

Նրաժեշտ Անիին

«...Մարդկանց հասկացածի մեջ միշտ կրկնվում է հավիտենականը, անփոփոխելին, բայց անկարելի է, որ այս կամ այն նոր հնչյունը, նոր շեշտը չմտնվի այդ կրկնությունների մեջ»: Լեոյից «սրացած» այս իրավունքով մենք փորձեցինք մեր պատկերացումների մի մասը, մի աննշան մասը շարադրել Անիից, մի քաղաքից, պարմական մի սրբավայրից, ուր բազում գիտնականներ, գրողներ ու լրագրողներ են այցելել, և յուրաքանչյուրն իր մտորումի բարձրաձայնումն է ներկայացրել: Երբեմն ու գուցե հաճախ, ինքներս մեզ հարց տանք՝ որքանո՞վ ենք ծանոթ ազգի մնայուն արժեքներին, որքանո՞վ ենք պարաստ դրանց պահպանմանը եթե ոչ գործուն միջամտություն, ապա գոնե փազնապ ապրողի պահվածք ունենալ՝ բարձրաձայնելու երբեմնի այդ փառահեղ քաղաքի ավերակների անմռունչ ձայնը:

Եվ մեր այս ասելիքը ընդամենը խնդրանք է, որ չմոռանանք Անին՝ ի՞նչ իմանաս, այս փոփոխական աշխարհում դեռ ինչե՞ր կարող են լինել:

Նուսանք...

Շարունակելի